ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 66-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ և Կեչուտ գյուղերի բնակչության հողերի՝ չվճարված հարկերի նկատմամբ հաշվարկված տույժերի նվազեցման մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 60-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման իրականացման կարգը սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.7. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Ամառանոցային փողոցի N 2/1 հասցեում գտնվող հողամասը Դավիթ Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի 6-րդ փակուղու N 10 հասցեում գտնվող հողամասի հետ փոխանակելու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.8. Իտալիայի Հանրապետության Տրևիզո գավառի Ազոլո և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքների միջև բարեկամության համաձայնագիր կնքելուն համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

1.9. Հայաստանի Հանրապետության սեփականությունը համարվող Ամառանոցային փողոցիN 2/1 հասցեում գտնվող անտառային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և Ջերմուկ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կաղլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		

Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-.....0.... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 67-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԵՎ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ՝ ՉՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ պարբերության, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի, հողի հարկի արտանությունները սահմանելու կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 1998 թվականի մայսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի հիման վրա ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Սահմանել հողի հարկի՝ չվճարված հարկերի նկատմամբ հաշվարկված տույժերի նվազեցման արտոնություն 835.6 հազար ՀՀ դրամ գումարի չափով Ջերմուկի համայնքի Կեչուտ և Գնդեվազ գյուղերի առանձին հարկ վճարողների համար՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			

Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

Հավելված 1
Ջերմուկ համայնքի ավագանու
2017թ. սեպտեմբերի 19-ի N 67-Ա որոշմա

ՑՈՒՑԱԿ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ
ՉՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՆՎԱՃԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ

Ազգանուն	Անուն	Մարզ	Համայնք	Բնակավայր	արտոնության չափը , ՀՀ դրամ
Եփրեմյան	Վահան	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	13600
Ստեփանյան	Լևոն	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	20000
Ավետիսյան	Դերենիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	20000
Թադևոսյան	Արտավազդ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	9900
Թադևոսյան	Մելանյա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	10000
Գևորգյան	Գառնիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	21800
Գալստյան	Լուսիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	20000
Թովմասյան	Հրաչիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	13700
Բագրատյան	Լիդա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	20000
Արսենյան	Յուրիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	11700
Աբգարյան	Լյուդվիգ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	17500
Ավետիսյան	Կամո	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	12000
Հարությունյան	Սաթիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	16100
Եղիազարյան	Նվարդ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	19200
Բագրատյան	Սոս	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	10000
Խաչատրյան	Խաչատուր	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	10000
Ստեփանյան	Գեղամ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	8200
Հովհաննիսյան	Բաբկեն	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	5600
Հովհաննիսյան	Գարիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	15700
Վարդանյան	Վարդան	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	4100
Ասատրյան	Մարգար	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	12400
Նիկոլայան	Հայկուշ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	11800
Նիկոլայան	Երազիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	8000
Թորոսյան	Ջիվան	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	15000
Առաքելյան	Ֆերենդիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	15000
Գալստյան	Գալուստ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	6000
Սամսոնյան	Ֆիրդուսի	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	6000
Համբարձումյան	Արմենակ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	10000
Գրիգորյան	Սամվել	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	6000
Համբարձումյան	Վլադիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	10000
Առաքելյան	Լևոն	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	10000
Մանուկյան	Ջուլիետա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	10000
Մաթևոսյան	Ռոզա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԿԵՉՈՒՏ	18500
ԸՆԴԱՄԵՆԸ					***417800***

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 2
Ջերմուկ համայնքի ավագանու
2017թ.սեպտեմբերի 19-ի N 67-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱՋ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ՝
ՉՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՑԺԵՐԻ ՆՎԱՀԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ

Ազգանուն	Անուն	Մարզ	Համայնք	Բնակավայր	արտոնության չափը , ՀՀ դրամ
Հովհաննիսյան	Վիրաբիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	25000
Մարգարյան	Զորիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Պետրոսյան	Վոլոդյա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	25000
Մարգարյան	Ռոբերտ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Զաքարյան	Իգնատ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Գրիգորյան	Պապո	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Խաչատրյան	Հասմիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	15000
Մարկոսյան	Գրիգոր	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Հակոբյան	Վազգեն	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Առաքելյան	Երազիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Արշակյան	Նորիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Եղոյան	Ջիվան	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Հակոբյան	Երազիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	20000
Գալստյան	Նազիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Հունանյան	Կամո	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Առաքելյան	Դուխիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Մարգարյան	Սեդա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Նավասարդյան	Ժորա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Հովհաննիսյան	Աբել	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Խաչատրյան	Սլավիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Խաչատրյան	Իշխան	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Մարգարյան	Վասիլ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Գրիգորյան	Թագուհի	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	9600
Արսենյան	Գուրգեն	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Եղոյան	Միհեր	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Խաչատրյան	Արտեմ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Անտոնյան	Ռոզա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	15000
Ներսիսյան	Աբել	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5200
Բաբայանոսյան	Սանասար	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Հակոբջանյան	Միհրան	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Խաչատրյան	Լարիսա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Եղոյան	Վահան	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Գրիգորյան	Վարազդատ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Թադևոսյան	Ամասսիա	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Սարգսյան	Ռուբիկ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Աղաբեկյան	Գուրգեն	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Նավասարդյան	Կարինե	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000

Հակոբյան	Արարատ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Ներսեսյան	Զավեն	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Նիկոլայան	Արծիրուն	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	10000
Մարգարյան	Հրայր	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Մկրտչյան	Արևհատ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Ներսիսյան	Միհրդատ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Սարգսյան	Վանո	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	5000
Անդրեասյան	Գերասիմ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՋԵՐՄՈՒԿ	ԳՆԴԵՎԱՋ	8000
		ԸՆԴԱՄԵՆԸ			***417800***

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 68-Ն

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի կետի 5-րդ ենթակետով, 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի և «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության միջև 2017 թվականի հուլիսի 27-ին կնքված հողամասերի վարձակալության և կառուցապատման պայմանագրերը, ինչպես նաև «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի և տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված լրացուցիչ պայմանագրերը՝ Ջերմուկի համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի N 18-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Ջերմուկ համայնքի 2017 թվականի բյուջեի վարչական մասի եկամտային բաժնում «22-52-00-հողի վարձավճար համայնքի սեփականություն հանդիսացող ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի» և «46-05-00-տեղական վճարներ՝ ծառայությունների մատուցման դիմաց» գործառնական դասակարգումներով եկամտային հոդվածները ավելացնել համապատասխանաբար 6151.3 հազար և 2753.7 հազար ՀՀ դրամի չափով:

բ) Ջերմուկ համայնքի 2017 թվակպնի բյուջեի վարչական մասի ծախսային բաժնում «05-01-01-51-աղբահանություն և սանիտարական մաքրում» գործառնական դասակարգմամբ ծախսերի կատարման նախահաշվում «4511-սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակեպություններին», «4655-կապիտալ դրամաշնորհներ պետական/համայնքային/ ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածները ավելացնել համապատասխանաբար 1298.1 հազար և 7606.9 հազար ՀՀ դրամի չափով:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով կատարված փոփոխությունների արդյունքում Ջերմուկ համայնքի բյուջեն եկամտային և ծախսային մասերով կազմում է *700007.0 հազար ՀՀ դրամ*, որից

վարչական բյուջե - 392529.5 հազար ՀՀ դրամ

ֆոնդային բյուջե - 307477.5 հազար ՀՀ դրամ

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 69-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 60-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետի հիման վրա, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարի ամսական վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 60-Ա որոշմամբ հաստատված և Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 7-ի «Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 60-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2017 թվականի հունվարի 16-ի N 10-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին» N 25-Ա որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

* *աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմում 32-րդ տողի «հաստիք» սյունակում «2» թիվը փոխարինել «2,5» թվով*

* *«Ընդամենը» տողի «6» և «713206» թվերը համապատասխանաբար փոխարինել «6,5» և «763 206» թվերով*

* *«Ընդհանուրը» տողի «37» և «6255680» թվերը համապատասխանաբար փոխարինել «37,5» և «6305680» թվերով*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			

Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 70-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 36-րդ կետի պահանջով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		

Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-....0..... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի
սեպտեմբերի 19-ի N 70-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը միջոցառումների համալիր է, որն ուղղված է Ջերմուկ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի **պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով**:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

4)ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում. 2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Ջերմուկի համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան՝ համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Ջերմուկի համայնքապետարանի կողմից:

10. Ջերմուկի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման (մասնագետի) կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ՝ հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբամանների առկայությունը.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը

տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

12. Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

15. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

16. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

17. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված տարածքի պարագծից 5-10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

8) Առանձին դեպքերի համար կարող են կիրառվել սույն կետի 1-7-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համաձայնեցնելով դրանք Ջերմուկի համայնքապետարանի հետ:

18. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 71-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՌՈՒՅՑ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված, համայնքային սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման դրույթներին համապատասխան կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		

Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 72-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հավանություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. Համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի 732 քմ մակերեսով (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0222-0074) հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակությամբ:

2.«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան չեղյալ ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 2-ի «Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին» N 32-Ա որոշումը (որոշմամբ ներկայացված 0,186 հա մակերեսով հողամասը բաժանվել է երկու առանձին գույքային միավորների):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			

Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 73-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ N 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԱՎԻԹ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ 6-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ N 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 71-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հողամասի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համաձայնություն տալ քաղ. Դավիթ Ջաքարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2016 թվականի ապրիլի 21-ին տրված N 21042016-10-0033 վկայական) Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի 6-րդ փակուղու N 10 հասցեում գտնվող 915 քառակուսի մետր մակերեսով հողամասի փոխանակմանը Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Ամառանոցային փողոցի N 2/1 հասցեում գտնվող 915 քառակուսի մետր մակերեսով համարժեք հողամասի հետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			

Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-....0..... ձեռնպահ- ....0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 74-Ա

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԵՎԻԶՈ ԳԱՎԱՌԻ ԱԶՈԼՈ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հավանություն տալ Իտալիայի Հանրապետության Տրևիզո գավառի Ազոլո և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքների միջև բարեկամության համաձայնագիր կնքելուն՝ ի շահ բարեկամության և համագործակցության հարաբերությունների զարգացման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			

Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017թ. N 75-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ N 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29-րդ և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 9-րդ և 12-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքայի համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին (ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխություն)» N 8-Ն որոշումը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի հողերի էլեկտրոնային քարտեզում փոփոխություն կատարելու նպատակով Ամառանոցային փողոցի N 2/1 հասցեում գտնվող պետական սեփականության 915 քմ մակերեսով անտառային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նշանակության՝ հասարակական կառուցապատման՝ համապատասխանեցնելով համայնքի գլխավոր հատակագծին:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			

Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7..... դեմ-.....0..... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 սեպտեմբերի 19
Ջերմուկ